

չիմացուի: Այս կրակը ժողովուրդը ուղղակի երկինքէն իջած կը համարէ: Այս կրակով անոնք եռաճիւղ մոմ մը կը վառեն, աւելի ճիշդ՝ երեք մոմեր իրարու հետ ոլորուած, մինչեւ կէսերնին (մոմերուն), եւ յետոյ երեք ճիւղի բաժնուած, հաւասարապէս հեռու, իբր Երրորդութեան խորհուրդ: Իւրաքանչիւր ճիւղ որ կը վառեն, կ'երգեն յունարէն ԼՈՅՍԸ ՅԻՍՍՈՒ, նախ՝ մեղմ ձայնով, յետոյ՝ մասամբ աւելի բարձրաձայն, եւ հուսկ, որքան բարձր որ կրնան, որ նշան է հրաշքին կատարման: Յետոյ Սուրբ Գերեզմանին բոլոր լոյսերը կը վառեն եւ կը բանան դոնները: Իրենցմէ իւրաքանչիւրը ձեռքին մէջ բռնած կ'ըլլայ եռամաս մոմերէն մէկը: Ատկէ վերջ եկեղեցականներ նախ ներս կը մտնեն, եւ յետոյ ժողովուրդէն անոնք, որ կրնան, այս կրակէն իրենց մոմերը վառելու համար, որու մասին կը հաւատան թէ երկինքէն իջած է: Այս արարողութեան կ'ընկերանայ ուրախութեան եւ անձկութեան մեծ արտայայտութիւն: Ան (իտալացի քարոզիչը) աւելցուց, որ ինքը եւ ուրիշ եղբայրներ փորձած են ժողովուրդը զզուցանել, սակայն, անոնք շատ զօրաւոր կերպով կեղծարարներուն ի նպաստ համոզուած են» 5):

Ուղեգիրը իր կողմէն կ'աւելցնէ, թէ կաթոլիկները եւ թուրքերը ինչ որ ալ քսեն այդ «հրաշք»ին մասին, «անկարելի է համոզել յոյները եւ հայերը անոր հակառակ» 6):

Ահա թէ ուղեգիրը ի՞նչ տեղեկութիւններ ունի հայոց դաւանական ըմբռնմանց մասին.

«Յոյները եւ հայերը, մասնաւորապէս անոնք, որ կը բնակին Եգիպտոս, Հայէջիստան եւ Ափրիկէի ուրիշ կողմերը (բացի հետեւելէ նախ Նեստորականութեան, երկրորդ՝ Եգիպտականութեան), կ'ամբաստանուին նաեւ հրէական արա-

րողութենէ ալ ընդօրինակութեամբ, ինչպէս թլպատութեամբ, թէ եւ, այժմ, ինչպէս որ ինծի հաւաստուեցաւ, շատ քիչեր կը թլպատուին»:

«Ես Հռովմայ կրօնական քարոզիչներէն ոմանցմէ իմացայ իրենց պարծենալը (թլպատութիւնը) անհետացնելու, նաեւ ուրիշ բազմաթիւ սխալներ ջնջելու իրենց մեծ բաժինը հայերուն մէջ, որոնք իրենց (քարոզիչներու) կողմէ յոյներէն աւելի ճշմարտութեան նախանձախնդիր գտնուած են»:

«Յոյներու եւ հայերու արարողութեան միջեւ զլիսաւոր տարբերութիւնը պատարագի մասին սա է, որ վերջինները ջուր չեն խառնէր սկիհին գինւոյն մէջ, ըսելով թէ Յիսուս Քրիստոս վերջին ճաշին ատեն գինւոյն մէջ բնաւ ջուր չէրաւ, որուն պէտք է հարազատօրէն հետեւիլ, թէ եւ ոմանք կ'ըսեն, թէ ասիկա կը ներկայացնէ Յիսուս Քրիստոսի միակ բնութեան խորհուրդը: Եթէ որեւէ մէկը անոնց հարցնէ թէ կը հաւատա՞ն հացին եւ գինւոյն (հաղորդութեան ատեն) կլանման, անոնք կը պատասխանեն (պրեթէ նոյն այն կերպով ինչպէս յոյները, առանց հաւատքին բացատրութեան համար ինքզինքնին նեղելու). — Մենք կը հաւատանք ատոր, չնորհիւ հաղորդութեան մէջ գործածուած զօրութեան: Մարմինը հոն է, ուր նախապէս միայն կար հաց: Մենք չենք հասկնար ասիկա, ոչ աւելի քան այն խորհուրդը, որ կը միացնէ սուրբ բնութիւնը մարդկայինին հետ: Մենք հաղորդութեան մէջ կ'ուտենք զանոնք, եւ չենք գիտեր, թէ Ս. Պետրոս կամ միւս Առաքեալները մենէ աւելի հաւատացին թէ ոչ, կամ թէ կրնայի՞ն որեւէ ուրիշ պատճառ տալ առ այդ»:

«Հայերը, որոնք կը հաւատան թէ այլեւս հաց չի մնար նուիրագործութենէն վերջ, այլ ամբողջական փոփոխութիւն կամ նիւթափոխութիւն մէկ նիւթէն մէկալը կատարուելով, կ'ամբաստանուին ոչ միայն Բողոքականներէն, այլեւ իրենց

5) Անդ՝ էջ 79-80:

6) Անդ՝ էջ 81: